

Հ. Մ. ԱՄԱԼՅԱՆ—Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, Երևան, 1971, 314 էջ:

Բառարան ըմբռնումը շատ լայն է: Տարբեր նպատակներով կազմված բառացանկերից սկսած, մինչև բազմահատոր հանրագիտարանները բառարան են համարվում: Ունենք բացատրական, իրկլեզվյան, ուղղագրական, ստուգաբանական (արմատական), ուղղախոսական, հոմանիշների, անձնանունների, տեղանունների, գիտության ու մշակույթի տարբեր բնագավառների վերաբերող գիտական եզրերի և այլ բնույթի բառարաններ: Հ. Ամալյանը բառարանի այսպիսի լայն ըմբռնումը էլ ձեռնարկել է միջնադարյան Հայաստանում ստեղծված բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը: Աշխատանքի արդյունքը հրատարակվել է երկու գրքով, որոնք նույն վերնագիրն են կրում, և միևնույն աշխատության երկու մասերն են, որոնցից առաջինն ընդգրկում է V—XV, իսկ երկրորդը՝ XVI—XVII դդ.:

Մինչև այս աշխատությունն էլ հայտնի էր, որ միջնադարյան հայ մատենագրությունն ունի բառարանագրական հարուստ ժառանգություն: Նրա առանձին հատկությունների և նմուշների մասին խոսք է եղել մի շարք աշխատություններում, որոնց զնահատականը գտնում ենք գրախոսվող աշխատության առաջին մասում: Սակայն այն ամենն, ինչ արվել է հայ հին ու միջնադարյան բառարանագրության ուսումնասիրման ուղղությամբ դիպվածային բնույթ է կրել, և Հ. Ամալյանի ուսումնասիրությունն է, որ ընթերցողին ու գիտական աշխարհին առաջին անգամ ներկայացնում է հայ բառարանագրության միջնադարյան շրջանի մի ամբողջական պատմություն, ցույց տալիս բառարանագրական աշխատանքի զարգացումը հայոց մեջ, ի մի բերում ընդ 13 հարյուրամյակի ընթացքում հայ հեղինակների ստեղծած բառարանագրական հարստությունը, դասդասում այն ըստ տեսակների և քննում ու զնահատում բառարանային բազմաթիվ հուշարձաններ:

Այս աշխատության շնորհիվ է, որ միջնադարյան Հայաստանի բառարանների մասին եղած բարձր, բայց և անորոշ կարծիքը որոշակի է դառնում և ավելի բարձրանում:

Աշխատության առաջին մասում (1968 թ.) հեղինակը նախ փորձում է մի քանի ճշտումներ անել հայ բառարանագրության սկզբնավորման մասին եղած որոշ պատկերացումների մեջ և պահպանված փաստերի ու կոհաճումների միջոցով ստեղծել V—X դդ. ընթացքում հայ բառարանագրության պատկերը: Նա քննում է այդ շրջանից պահպանված բառարանային նյութերը, ինչպես և բերում հայ մատենագիրների երկերից քաղված բառարանատրական հատվածների հետաքրքրական ցուցակը:

«Բառարանագրության զարգացումն ու ծավալումը, առհասարակ, մշակութային ընդհանուր զարգացման ու վերելքի արդյունք են», — արձանագրում է աշխատության հեղինակը՝ նախքան XI—XV դդ. հայ բառարանագրությանն անցնելը: Նա բերում է հետևյալ վիճակագրությունը. Մատենադարանում XI—XV դդ. պահպանված 31 գրչագիր բառարան կա. դրանք ըստ ընդօրինակման ժամանակագրության բաշխվում են այսպես՝ XII դ.՝ 1 բառարան, XIII դ.՝ 1, XIV դ.՝ 15, XV դ.՝ 14, որոնք աշխատության մեջ քննվում են ըստ տեսակների՝ բացատրական, թարգմանական, ուղղագրական, հատուկ անունների, մասնագիտական և այլն (վերջին խմբում ընդգրկված են լեզվաբանական, փիլիսոփայական, բժշկական բառարաններ ու տեղեկատուներ):

Շատ հետաքրքրական է աշխատության այս մասի վերջին գլուխը՝ «Անունություններ ձեռագիր և տպագիր բառարանների միջև», որի հիմնական նյութը Երեմիա Մեղրեցու անունով հայտնի «Բառգիրք Հայոց» հնատիպ բառարանից է. Աճառյանի «Հայերէն արմատական բառարանի» մեջ անցած աղավաղումների ճշտումն է՝ ըստ գրչագիր բառարանների: Պարզվում է, որ Մեղրեցու հիշյալ բառարանում վրիպակներով տպագրված աղավաղյալ բազմաթիվ բառեր ու բացատրություններ նույնությամբ մտել են Աճառյանի «Արմատական բառարանի» մեջ:

Այսպես, օրինակ, Արմատականի արլեալ, անաբատ, բանիւն, գերում, դնար, կորշումն, ներգող, փայփաբէլ գլխաբառերը իրականում բառեր չեն, այլ աղավաղումները ալ, անաբատիպ, բովբիւն, գերսամ, դնոց, կորշումն, նեցգող, փայփայել բառերի և պետք է ճշտվեն:

Այսպիսով, աշխատության հեղինակը համոզում է, որ միջնադարյան գրչագիր բառարանները արդիական օգտակարություն ունեն։ Այդ բանը նա ավելի համոզիչ է դարձնում աշխատության երկրորդ մասում, որտեղ հավելվածում տրված է մի բառացանկ, որի մեջ հավաքված են V—XVII դդ. գրչագիր բառարաններից հեղինակի հանած այն բառերը, որոնք չկան հայերեն տպագիր բառարաններում։ Այդ շատ հետաքրքրական բառաշարքում ի թիվս այլոց գտնում ենք ոչ քիչ բառեր, որոնք արժեքավոր փաստեր են հայերենի բառամթերքը ուսումնասիրողի համար։ Ուշագրավ են այնպիսի կազմություններ, ինչպես՝ զծաձև, դեղնապղինձ, դեղպան, ընդմեր (մոտիկ), րազադապետ, խապրեբ, խոհակար (վրանկար), ծագմտոն (ճկույթ), ծաղկազմայլ, փառադիտակ, հոգեհանանչ, հովտաբեր, ձերբառառ (առատաձեն), նախապատում, ճեմաշարժ, մատուակիչ, մշտացոյց, շնորհախոս, շոշափայլ, պառագարդ, պարկեշտանուն, սեղաբեխ, սիւանորոգ, սիւրաբեր, վայելչահանդէս, վրանկար, տավառառուն և այլն։

Այսպիսի բառերը ոչ միայն հետաքրքրական են հայերենի բառակազմական հնարավորությունների ուսումնասիրման տեսակետից, այլ նաև նրանով, որ դրանք դուրս մնալով «նոր հայկադանից», ինչպես և գրաբարի մյուս տպագիր բառարաններից և ավանդված չլինելով նոր ժամանակներին, չէին կարող այս կամ այն չափով մտնել արդի հայերենի զործուն բառամթերքի մեջ և, շնայած դրան, նրանց մի մասը նույն ձևով նորից է կազմվել նոր ժամանակներում։ Օրինակ, այդպիսիք են զծաձև, դեղնապղինձ, խոհակար, ծաղկազմայլ, վրանկար և այլ բառեր, որոնցից առաջին երկուսը արդեն տեղ են գտել ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի առաջին հատորում (1969 թ.), իհարկե, իբրև նոր բառեր, նորոգ իմաստով։

Այսպիսով, թեև բառացանկն ըստ կազմողի ընդգրկում է բառեր, զորոնք չկան հայերեն տպագիր բառարաններում, բայց—ահա նրա մեջ տեղ են գտել նաև բառեր, որոնք թեև շնորհա-ծին են, բայց միաժամանակ հնի ու «մահացածի» հետ կազմությանը ու բաղադրիչներով նույնական, հենի երկրորդ թեմանդն են և կան նաև տպագիր բառարաններում։ Հայերենի այս հետաքրքրական երևույթը արժե հանգամանակից քննության նյութ դարձնել։

Ուշագրավ են նաև տավառառուն, խապրեբ, կլուլակ, կլուլակել և նման մի շարք բառեր, որոնք միջնադարյան ընագրեր ու բառարաններ են թափանցել ժամանակի ժողովրդական խոսքից։ Բառացանկի որոշ բառեր էլ լրացնում են գրաբարյան դասական բառազանձի մասին եղած պատկերացումը. օրինակ, նոր Հայկազյան բառարանը (ՆՃՐ) տալիս է կաշկանդել (կաշկանդել) բայը, բայց չունի կաշկանդ գոյականը, որը ներկա աշխատության հեղինակը գտել է միջնադարյան բառարաններից մեկում կամ՝ ՆՃՐ-ն ունի մատուակ գոյականը, մատուակել բայը, բայց չունի մատուակիչ բայը, որը Հ. Ամալյանը հանել է միջնադարյան «Բառամատուց բառարան»-ից։

Մի շարք բառեր էլ, որոնք հայտնի են գրաբարի բառապաշարից, աշխատության հեղինակի նայած գրչագիր բառարաններում անծանոթ իմաստներով են ներկայացված եղել, ինչպես, օրինակ, դասական՝ ժողովական, զգածիլ՝ յիմարել, ըմբռնել՝ մասնաւորել, կոպառ՝ կուռ, քիւ-բաւիդ կամ՝ անկիւն և այլն։ Այսպիսի դեպքերում հավանաբար մեծ զգուշություն է պետք՝ եղած ու հայտնի բառն իբրև նորություն չներկայացնելու համար։ Օրինակ քիւ-ի անկիւն համանիշը նոր գրեթե ոչինչ չի ավելացնում այդ բառի արդեն հայտնի իմաստների վրա, իսկ իբրև նույն քիւ-ին համանիշ տրված քափդը—հնարավոր է, որ որևէ թյուրիմացության արդյունք լինի (քիւ-ի բերված երկու համանիշները՝ քափդը—ու անկիւնը— իրար նկատմամբ նույնպես պետք է համանիշ լինեն, մինչդեռ դրանք բոլորովին տարբեր իմաստներ ունեն)։ Կամ՝ ըմբռնել բայի մոտ միջնադարյան բառարանում մասնաւորել բայի, իբրև համանիշի առկայությունը, թվում է նույնպես թյուրիմացության արդյունք պետք է լինի։

Կոպառը ըստ երևույթին, հայտնի կոպար-ն է (եզր, սահման, շափ—ՆՃՐ), որ նույն իմաստով ավանդված է նաև կոպառ ձևով, զգածիլ—ն էլ, թերևս, զգածիլը (հագնվելը) լինի. եթե սրանց վերոհիշյալ համանիշներն էլ որևէ թյուրիմացության արդյունք չեն, պետք է փոխաբերություններ համարել և գտնել աղբյուրը։ Իսկ բառացանկում տրված կտեխը— իր բոլորովին համանիշով գուցե և պետք չէր նորություն համարել։ Կտել բայը հայտնի է (եկէտկէտ, կուտ կուտ ընելը ՆՃՐ), որ փոխաբերաբար կարող էր օգտագործվել բոլորտության համար։

Բառացանկի մի շարք բառեր ճշգրտում կամ գտնե ծանոթագրություն են պահանջում. օրինակ, ըստանցնիւրը, հավանաբար պետք է սրբագրել ըստանձնիւր, րավափայլը— գուցե՝ երամա-փայլ, րաշխաւորելը— երաշխաւորել(ը) և այլն։ Կարծում ենք կարիք չկար բառացանկում գետեղել այնպիսի բառակապակցություններ, ինչպես՝ Համակ տիկին (ամենայնի տիկին), ձկան տուր-դալն, մեծ սուր Գորգու խոտն, մեծ սուր Գորգու խոտին տակն, որդի գորացից, պանրի մալ-յեալ և այլն, որոնք բաղադրիչ բառերը հանրահայտ են, իսկ կապակցությունների մասին հեղի-

նակը կարող էր համապատասխան բառարանի առիթով խոսել, նույնը պետք է ասել բազմաթիվ օտար՝ հունարեն, թուրքերեն, արաբերեն, նոր պարսկերեն բառերի մասին (իսլիսկոս, իրիդէոս, Ի.Բալիդէս, լիդոսարադոս, պոռփիլոփոնոս, սոմեւ, շենօպօղիայ, դատար, դարլաշաւ, դարաշաւ, խաղինադար և այլն), որոնց մի մասը միջնադարյան բառարաններում գրվել են պարզապես հայերեն թարգմանությունը տալու համար, այսինքն՝ ոչ թե փոխառյալ, այլ թարգմանվող բառեր են՝ օրինակ, «Տնվրինայ» (թաշանուճ. չղերոյն քաշվիլն, որ թուրքն տովրիճայ ասէ), իսկ մյուս մասը հայերեն բնագրերում հաղվադեպ (հաճախ մեկ անգամ) տեղ գտած կամ սպրդած բառեր են:

Աշխատության երկրորդ մասը հիմնականում նվիրված է XVII դ. բառարանագրությանը. քննված են 18 բառարաններ, որոնցից մեկը տպագիր (Նրեմիա Մեղրեցունը), մյուսները զրազիր: Նյութը ներկայացված է չորս գլուխներում՝ ա) Բվշկական բառարաններ, բ) Սուրբ գրոց բառարաններ, գ) Թարգմանական բառարաններ, դ) Այլ բնագրերին առնթքեր և անկախ բառարաններ:

Իբրև բվշկական բառարաններ ուսումնասիրության նյութ են դարձել Ամիրդովլաթ Ամասիացու աշխատությունները, այդ թվում՝ նշանավոր «Անգիտաց անպէտը» և «Ախրապատինը»: Հանգամանալից են վերլուծված նաև «Վասն դեղերուն» և մանավանդ «Բառք բվշկականք վարդապետաց» բառարանները, որոնցից մեկական գրազիր օրինակ է պահպանվել: Հեղինակը հիշատակում ու քննում է բազմաթիվ հետաքրքրական բվշկական եզրեր, որոնք առկա են միջնադարյան այդ բվշկարաններում և որոնց աղբյուրը կամ հայ բարբառներն են, կամ գրաբարը կամ էլ օտար լեզուները:

2. Ամալյանը բանասիրական ուղագրավ վերլուծումներ ու կոհանմաներ է արել «Սուրբ գրոց բառարաններ» գլխում: Օրինակ, նա ճիշտ դիտողություն ունի «Բառք սուրբ գրոցի» վերաբերյալ, որն ընդգրկում է «Աստվածաշնչի» մի քանի առանձին հատվածների, այդ թվում սաղմոսների ու ավետարանների բառաբացատրություններ և կարող է թվալ, թե թերի է: 2. Ամալյանը իրավացիորեն նշում է, որ բառարանն ամփոփող գրադրերից մեկը՝ տվյալ բառարանի բնագիրը ներկայացնում է լրիվ և որ այդ՝ «Աստվածաշնչի» առաջին հայերեն բացատրական բառարանը ուսումնական նպատակով Ս. Գրքի ամենից ավելի ուսուցվող հատվածները պարունակող մի ժողովածուի բառաբացատրությունների ցանկ է:

Ուսումնասիրության մեջ խնամքով ու մանրամասն է քննված «Աստվածաշնչի» բոլոր գրքերի բառաբացատրություններն ընդգրկող բառարանը, որի հեղինակը Նրեմիա Մեղրեցին է: Առհասարակ այս գլխում հեղինակը հատորեն է ընթերցողին ներկայացրել միջնադարյան բառարանների քննված խումբը:

Աշխատության առաջին մասում իր տված խոստումը (էջ 222) կատարելով՝ հեղինակը նորից է անդրադարձել Նրեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցին» և այս անգամ ամենից ավելի մանրամասն քննել այդ ուղագրավ բառարանը: Հետաքրքրական է վերջինիս համեմատումը «Բառք քերթողական» բառարանի հետ, որի շնորհիվ միջնադարյան բառարանագրության ուղագրավ հատկանիշներ են բացահայտվում: «Բառգիրք հայոցը» հեղինակն իրավացիորեն համարում է միջնադարյան հայոց բառարաններից ամենահարուստ ու ամենից ավելի օգտագործվածը և բոլոր միջնադարյան բացատրական բառարանների հանրագումարը:

Հեղինակն ուղագրության է առել նաև Ն. Ակինյանի կասկածը բառարանի հեղինակության վերաբերյալ: 2. Ամալյանը բանասիրական մանրակրկիտ վերլուծումներ ու համեմատություններ է անում և եզրակացնում. «Բառարանի հեղինակը Նրեմիա Մեղրեցին չէ: Սակայն շատ հավանական է, որ նա է կազմել երկրորդ խմբագրությունը և հրատարակել այն իր անունով» (222), «նա է ամենահավանական հեղինակը բառարանի այն խմբագրության, որը տպագրվել է նրա անունով» (217):

«Բառգիրք Հայոցի» ու «Աղուէսագրքի» հրատարակության հետ Նրեմիա Մեղրեցու ունեցած առնչության հարցը քննելու առիթով աշխատության մեջ գրված է. «Աղուէսագիրքը՝ Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրքը, առաջին անգամ տպագրվել է Ամբաստնրամում, 1668 թ.: Գրքի մեջ Նրեմիա Մեղրեցին կամ որևէ հեղինակ չի հիշատակվում: Երկրորդ անգամ հրատարակվել է էջմիածնում 1698 թ.: Գիրքը աշխարհաց և առասպելաբանութեանց: Որ է Աղուէսագիրք: Ի Սուրբ էջմիածին Նրեմիա վարդապետէ տիտղոսաթերթով» (84): Իրականում 1698-ին էջմիածնում ոչ տպարան է եղել, ոչ էլ տպագրության փորձ (հայտնի է, որ էջմիածնի տպարանը հիմնադրվել է 1771-ին), ուստի տիտղոսաթերթի Թե Սուրբ էջմիածինը՝ չպետք է շփոթվի:

Գրքի 218—221 էջերում «Բառգիրք Հայոցի» 1698 թ. հրատարակությունը անառակելիորեն

Համարվում է իրվողնություն (Ալիկոռնություն) կատարված: Մինչդեռ վաղուց է կասկածի տակ դրվել այդ ժամանակաշրջանում իրվողնության մեջ հայկական տպագրություն լինելը¹: Իրականում ինչպես ռեալիզմի, Զալոցի, այնպես էլ XVII դ. վերջում ու XVIII դ. սկզբում տպված մի քանի ուրիշ գրքերի վրա Ալիկոռնության առկայությունը կեղծիք պիտի համարել. այդ գրքերի հրատարակման իսկական վայրը Կ. Պոլիսն է: Փաստված չէ նաև աշխատության 219-րդ էջում հայտնված այն կարծիքը (կամ արված ենթադրությունը), ըստ որի XVII դ. վերջում Ս. էջմիածնի անվան տպարանը սպասարկվել է էջմիածնի միաբանների կողմից (էջ 219): Հիմք կա մտածելու, որ այդ անունն էլ (Ս. էջմիածնի և Ս. Սարգսի) Ալիկոռնության հետ Կ. Պոլսի հրատարակիչ Սարգիս Եվդոկիացու (Սահաունու) կողմից իր տպագրած գրքերի վրա են դրվել Ոսկանյան հայտնի տպարանի տպավորությունը ստեղծելու համար:

Ի դեպ, աշխատության մեջ կա նաև հայ հին տպագրությանը վերաբերող մի անճշտություն ևս: 70-րդ էջում դրված է, որ իբր Քևստվածաշնչիա Հ. Զոհրապյանի հրատարակությունը (Վենետիկ, 1805) հաջորդն է Ոսկան Երևանցու հրատարակությունից հետո: Իրականում նախքան Զոհրապյանի հրատարակությունը եղել են Աստվածաշնչի (ամբողջական) երկու ուրիշ տպագրություններ (Կ. Պոլիս, 1705 թ. և Վենետիկ, 1733 թ.):

Նշված անճշտությունները, իհարկե, լավ կլինեին որ շարդեին այսպիսի մի արժեքավոր աշխատության մեջ, բայց, բնականաբար, ինչպես միշտ, այս դեպքում ևս, անհնար է եղել լիովին ուսալաղերծ լինել:

Աշխատությունը, որ հեղինակի բանասիրական ակնհայտ հմտությունների և ջանասիրության վկայագիրն է, Մաշտոցյան մատենադարանի հայագիտությանը մատուցված լավ նվերներից է:

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

¹ Հմմտ. «Շանդես ամսօրյա», 1911, էջ 280: